ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ք. Երևան 23 ԱՎԾ-Ծ21-2015/19 03.նոյեմբեր 2015թ.

ՀՀ Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանը, ի դեմս վարչական շրջանի ղեկավար Ա. Ուլիխանյանի /այսուհետ՝ Սպասարկող/ մի կողմից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանի /այսուհետ՝ Պատվիրատու/ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն պատվիրում է, իսկ սպասարկողը պարտավորվում է ապահովել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից վարձակալության պայմանագրով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմին տրամադրված ք. Երևան, Գայի պողոտա 19 հասցեում գտնվող վարչական շենքից 30.4 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի սպասարկումը:

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջև սույն պայմանագրի 1.1 կետում նշված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետով՝ մինչև 2017թ-ի դեկտեմբերի 31-ը:

1.3. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, սահմանում են, որ սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2015թ.-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Կողմերի պարտավորությունը

2.1. Սպասարկողը պարտավորվում է.

ա/ Ապահովել Պատվիրատուի կողմից նշված տարածքի անհրաժեշտ էլ. էներգիայի մատակարարումը և քաղաքային հեռախոսակապի ապահովումը:

բ/ Պատվիրատուի կողմից վճարումները կատարելու նպատակով ստորագրել և Պատվիրատուին հանձնել հանձնման-ընդունման արձանագրություններ, հաշիվ ապրանքագրեր:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է.

ա/ Սպասարկողի կողմից 2.1. կետի բ/ ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 բանկային օրվա ընթացքում վճարել սպասարկման վճարները: Դրամական միջոցների վճարումն իրականացվում է անկանխիկ՝ հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

2.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Սպասարկողից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

2.4 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Սպասարկողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

2.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2 կետի ա/ ենթակետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

2.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3. Սպասարկման վճարը

	Սպասարկման ծառայությունը	սպասարկման վճարը 1 քմ տարածքի և 1 անձի համար	սպասարկման վճարը /տարեկան/
1. Տարածքի սպասարկում (մակերես՝ 30.4 քմ, աշխատողների թիվը՝ 4)			
ա.	Էլեկտրաէներգիայի մատակարարում	Ըստ հաշվիչի ցուցմունքի	Ըստ հաշվիչի ցուցմունքի
բ.	ջրօգտագործում	4x205դրx12 ամիս	9840
գ.	աղբահանություն	30.4x8դրx12 ամիս	2918
դ.	դեռատիզացիա	60 դր.	1824
ե.	ջեռուցում	1800 դր	54720
ընդամենը			69302

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը լուծվում են ըստ ՀՀ գործող օրենսդրության:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.3. Սույն պայմանագրի կնքման պահից կողմերի միջև 19.09.2013թ.-ին կնքված «Ոչ բնակելի տարածքի սպասարկման վարձավճարների» պայմանագիրը համարել լուծված:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

5.1 Սույն պայմագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները և այլն, որոնք անհնար են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՍՊԱՍԱՐԿՈՂ

ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար

Հասցեն՝ ք. Երևան, Գայի պող. 19
Հ/Հ 900035050104
թիվ 3 գանձապետական բաժանմունք
ՀԿՀՀ 00822031

Վարչական շրջանի ղեկավար

/ ստորագրություն /

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն աշխատակազմ
Հ/Հ 900011011013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀԿՀՀ 02507509
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3,
Աշխատակազմի ղեկավար

/ ստորագրություն / Ա. Հայրապետյան